ԺԲ.

Հաւուց Թառի խաչից իջեցնելու պատկերագրութիւնը միակը չէ հայ արուեստի պատմութեան մէջ. ԺԻ. և յետագայ դարերում կրկնւում են նոյն մոտիւները փոփոխակներով խաչքարերի պատկերագրութեան մէջ հէնց Ամենափրկիչ անունով, սերտ կապ ցուցադրելով հայ եկեղեցու դաւանաբանական հասկացողութեան հետ։ Բայց դրանցից էլ առաջ՝ ԺԱ–ԺԲ. դարերում ունինք խաչելութեան և խաչից իջեցնելու մանրանկարներ, որոնք զարգացման միջին օղակն են հնագոյն շրջանի և ԺԻ. դարի քանդակագործական պատկերագրութեան մէջ։

Դոցանից հնագոյնը Սեբաստիայի վիլայէթի Խանդալ աւանի եկեղեցու մեծագիր աւետարանն է, 46 × 30,16 սմ. մեծութեամբ,(1) մագաղաթ, խոշոր երկաթագիր, նկարազարդուած և գրուած «ձեռամբ . . . (Զ ԽԱՆԻ ԳԱՐ ՔՀՆԱՅ, ԳՐԻՉ ԳԻՐՆ ՅԵՐՈՎ) Սամուելի նուաստ քահանայի եւ յետին գրչի, ի թագաւորութեանն Հոռոմոց որ կոչի Միխայլիս(2) եւ ի թուականութեանն Հայոց ՆՂ. (= 1041) եւ ի կաթողիկոսութեանն տէր Պետրոսի Հայոց կաթողիկոսի եւ վերադիտողի. յորժամ Յաւանէս հայոց կա (ԽՈՒՄԲ ԳՐԻՉ ԿՈՂՄԻՑ, ԻՆՉ ԳՈՒՆԱՑ՝ ԸՆԴԳԾՈՒԱԾՔ) թագաւորն վախճանեցաւ ի քո՞ եւ ետ զթագաւորութիւն (տ!) իւր որդւոյ եղբաւր իւր որ կոչի Գագիկ»։ Արուեստը թէեւ պարզ եւ նախնական, բայց վերին աստիճանի հետաքրքրական իւր զուտ արևելեան բնաւորութեամբ, առանց բիւզանդական ազդեցութեան. պատկերներից մէկը (9բ) խաչելութեան և խաչից իջեցնելու տեսարաններն են, կազմուած Յովհ. ԺԹ. գլխի պատմութեան համեմատ։

Այստեղ (պատկ. 29) տեսնում ենք, որ Յիսուս բևեռուած է տախտակաձև խաչափայտի վերայ, թևերը քիչ ճկուած, երեւում են բևեռները ձեռքերին. ոտքերն էլ մեխուած են պատուանդանի վերայ. խաչափայտի գլխին կպցրած է հորիզոնական ցուցանակը, բայց առանց գրութեան։ Լուսոյ պսակը բոլորակ է և խաչաձարդ. երկար մազերը կախուած են ուսերին, մորուքը կարճ, աչքերը բաց, դէմքով և մարմնով դէպի աջ թեքուած. մերկ է, բայց ամօթանքը մինչև ծնկները հասնող չապկաձև փաթոյթով ծածկուած. ոտքերն իրար կողքի, քառանկիւնի պատուանդանի վերայ մեխուած, նման Հաւուց Թառի Ամենափրկչի պատկերագրութեան։ Խաչափայտը հաստատուած է բարձրութեան վերայ, երկու ցցով ամրացրած. խաչափայտի տակ Ադամի գլուխը, խաչի հորիզոնական թևերի վերայ արեգակ և լուսին։ Մարիամ և Յովհաննէս կանգնած են աջից և ձախից. առաջինը բարեխօսի դիրքով, աջ ձեռքը մեկնած, իսկ ձախը կրծքին որպէս երկիւղածութեան և վշտի թեթև արտայայտութեան նշան. նա հագել է մինչև ոտները հասնող ներքնազգեստ և վերան ձգել կըրկնոցը՝ ծնկներից ցած հասնող. գլխին լաչակ, որի մի ծայրը պարանոցի տակով անցնում է աջ ուսից։ Յովհաննէսը աջ ձեռքը դրել է այտին, իսկ ձախում մագաղաթի փաթոյթ բռնել. ներքնազգեստը մինչև բոբիկ ոտները, իսկ ուսերի վերայից ձգել է տոգայ. մորուք չունի, աչքերն ու դէմքը

Պատկեր 29

Խանդալի (Սեբաստիոյ վիլայէթ) աւետարանի մանրանկար, 1041 թ.

(1) Տեսել ենք. նկարագրել եւ մանրանկարները լուսանկարել 1914 թուին, երբ ակադեմիկ Մառի միջնորդութեամբ՝ Դիտութեանց ձեմարանից ստացած յանձնարարականով ճանապարհորդում էինք Փոքր Ասիայի հայաշատ քաղաքները, հայ մանրանկարչական արուեստի նիւթեր հաւաքելու։

(2) Միխայէլ Դ.ն է. մեռաւ 1041 թ. դեկտ. 10ին։